ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ info@jrar.am

N 940

22 04 2024 թ.

ք. Երևան

«ՔԻՆԳ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի
տնօրեն Դ. Նիկողոսյանին
Հասցե՝ ՀՀ քԵրևան, Մամիկոնյաց 21/42
ՀՎՀՀ՝ 00148685
Էլ. հասցե՝ QING.BILDING@mail.ru

Հարգելի՛ պարոն Նիկողոսյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՔԻՆԳ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կապալառու) 08.09.2023 թվականին կնքվել է N «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-23/3-1» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնել է Արզնի-Շամիրամի մայր ջրանցքի 2-րդ հերթի ՆԿ245+40-:-ՆԿ246+17 և ՆԿ175+72-:-ՆԿ 178+42 նշակետերում գտնվող հիդրոտեխնիկական կառույցների հիմնանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված թիվ 1-ով սահմանված Ծավալաթերթ-Նախահաշվի և Հավելված թիվ 2-ով օրացույցային գրաֆիկով սահմանված պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի երկրորդ մասի համաձայն՝ պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացույցային գրաֆիկով(Հավելված N2):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 706-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրում նշվում են աշխատանքը կատարելու սկզբնական և վերջնական ժամկետները: Կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրում կարող են նախատեսվել աշխատանքի առանձին փուլերի ավարտի (միջանկյալ) ժամկետներ:

Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքը կատարելու ինչպես սկզբնական և վերջնական, այնպես էլ միջանկյալ ժամկետները խախտելու համար, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նախատեսված չէ պայմանագրով:

Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում, սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների

կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

Հայտնում ենք, որ «ՔԻՆԳ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը սույն պայմանագրի 1.3 կետի երկրորդ մասով սահմանված պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N2-ով նախատեսված օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան աշխատանքների կատարման վերաբերյալ Պայմանագրի 4.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

«Ջրառ» ՓԲԸ-ն 06.12.2023 թվականի N 1443 գրությամբ տեղեկացրել է Կապալառուին, որ 2023 թվականի դեկտեմբերի 05-ի դրությամբ օրացույցային գրաֆիկով սահմանված աշխատանքները չեն իրականացվում և առաջարկել է ապահովել պայմանագով ստանձնած պարտավորությունները և սահմանված գրաֆիկին համապատասխան Պատվիրատուին ներկայացնել աշխատանքների կատարման վերաբերյալ Պայմանագրի 4.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

18.01.2024 թվականին Պատվիրատուն իր N 40 գրության կից արձանագրությամբ արձանագրել է, որ «ՔԻՆԳ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-23/3-1» պայմանագրով իրականցվող աշխատանքների ՆԿ245+40-:-ՆԿ246+17 նշակետում կատարված աշխատանքները չեն համապատասխանում ինչպես նախագծանախահաշվային փաստաթղթերին, այնպես էլ պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված N 1-ին:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կապալառուն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հարկ է նշել, որ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող աշխատանքի օրացույցային գրաֆիկի համաձայն Պայմանագրի գործողության վերջնաժամկետ է նշվել մինչև 2024 թվականի ապրիլի 05-ը, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետք է ապահովել 2024 թվականի ոռոգման ջրամատակարարման անխափան լինելը և ղեկավարվելով Պայմանագրի 3.1 կետի 3.1.3 կետով իր հայեցողությամբ կատարողի համար սահմանել է աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել է Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:

07.06.2024 թվականի արձանագրությամբ մասնագիտական խումբը (այդ թվում նաև «ՔԻՆԳ ԲԻԼԴԻՆԳ» Ընկերության տնօրենը և աշղեկը) արձանագրել են որ կատարված աշխատանքները թերի են, չեն համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերին, «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-23/3-1» ծածկագրով պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելվածներ N 1-ին և N 2-ին, իսկ այդ պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները Կապալառուն կատարել և կատարում է մասամբ և թերացումներով:

Ուստի, ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով, որ «ՔԻՆԳ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 3.1 կետի 3.1.4 ենթակետի «բ» պարբերության դրույթով՝ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանի լուծում է «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-23/3-1» ծածկագրով Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ «ՔԻՆԳ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Կապալառուի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Կապալառուին սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 և 900008000698 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու) նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կապալառուին սպասարկող բանկի կողմից «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-23/3-1» ծածկագրով գնման պայմանագրի բանկային երաշխիքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, անհրաժեշտ է այդ մասին գրավոր տեղեկացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք նաև, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված հաշվեհամարին, ապա Կապալառուի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները և 2-րդ մասի պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Ա.Ս. ԱԲԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Հ.Բաղդասարյան
Հեռ.՝ 041-33-02-41